ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաքՄարալիկ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 118

28 դեկտեմբերի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 78 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ մասերի, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

*<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք Մարալիկ) սույն որոշման հավելվածում նշված գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողն օտարել աճուրդով:

2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք Մարալիկ) հողերից (կադաստրային ծածկագիր՝ 08-003-0126-0025) աճուրդային եղանակով հողատարածք օտարելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին>> թիվ 78 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ' ... 11 | Դեմ' ... 0 | Ձեռնպահ' ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | | | |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | | | |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | | | |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | | | |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | | | |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | | | |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | | | |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | | | |
| Ա.ՌԻՌՈՒՄՅԱՆ | | | |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | | | |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | | | |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 28

Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 118 ՈՐՈՇՄԱՆ

ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը, հողատեսքը | Հողի որակական հատկանիշը | | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ` սերվիտուտների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը` կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Աճուրդի դրված հողամասի նախավճարի չափը` մեկնարկային գնի նկատմամբ (%) | Աճուրդի դրված հողամասի քայլի չափը մեկնարկային գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Հողի կարգը | Ջրովի, անջրդի | | | | | | | | |
| 1. | ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ | 08-003-0126-0077 վկայականի N 03082016-08-0035 | 0.8 | Գյուղատնտեսական | վարելահող | II | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության իրականացում | Չկան | Բաց աճուրդ | 1895000 | 100 | 1516000 | 5 | 5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ